Հոս կանայք՝ ըստ հին Ղրիմեցւոց սովորութեան՝ ծաղկեայ կապաներ կը հագուին, գլուխնին լաչակ կապած, մազերնին ճակատնուն վրայ՝ փերչիմ կամ փերչամ կտրած. ետևի կողմերէն կարգաւ բարակ հիւսուած մազերը մինչ ցգօտի կը հասնին, վզերնին և կուրծքերնին շարք շարք մանր և մեծ ոսկէ դրամք կը զարդարեն։ Նոյն ձեւը կը հագնին և աղջկունք, միայն այսու տարբերութեամբ որ սոցա հալաւին գոյնը իրենց դիմաց գունին համեմատ՝ աւելի պայծառ և ծաղկալից կը լինին։ Ըստ հին Իսրայելեան սովորութեան՝ տեսայ Նախիջևանու մէջ՝ որ աղջկունք մեծամեծ սափորներ ուսերուն վրայ առած՝ ջրհորներէն ջուր կը կրէին, հանգոյն Ռաքելի և Ռեբեկայ։ Իսկ մանչեր մեծ և փոքր մինչև ցծունկ բոբիկ, կապայ կռնակնին, գօտէպինդ, տրեխնին լաւ զսպած, դաշտի վաստակոց կը պարա պին. լուծ, եզ, վարուցան, կասուլ, կրել, այդոնք են նոցա գործերը։

Զալթըրցիք 'ի մշակութեան գերազանցել են քան զմիւս գիւղացիները. իրենց ցորենը, համեղ է և անուշ քան այլոցը, այնպէս որ՝ 1880 ին Մոսկուայի հանդիսադրութեան (exposition) առաջին մրցանակի արժանի եղած են։

Գիւղիս երէցփոխանն՝ երիցուն հետ 'ի միասին՝ եկեղեցւոյն ձեռագիրքը և արծաթեղէնքը ցոյց տալէն վերջ, ըստ հայկական մարգասէր հիւրասիրութեան 'ի տուն հրաւիրեց զմեզ։ Թէպէտ և այնպիսի զբաղանաց օր՝ չէր վայելուչ ծանրութիւն լինել՝ զի գիտէի արդէն որ տնեցիք անպարապ գործի հետ են վաղուան գալու ուխտաւորները հիւրասիրարելու համար, սակայն և այնպէս կարճ միջոց եղաւ մանել երէցփոխանին տունը։ Ինչպէս կը գու-